ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022թ. նոյեմբերի 6-ից 10-ը Շվեյցարիայի Համադաշնություն ք.՝ Ժնև կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Արաքս Կուրղինյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարության որակի ենթակառուցվածքի զարգացման վարչության ստանդարտացման, չափագիտության և հավատարմագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

3.Գործուղման վայրը և ժամկետները՝

Շվեյցարիայի Համադաշնություն, ք.՝ Ժնև, 2022 թ. նոյեմբերի 6-ից 10-ը

4. Հրավիրող կողմը՝

ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողով (UNECE)

5. Գործուղման նպատակը՝

«Կանոնակարգվող համագործակցություն և ստանդարտացման քաղաքականություն» հարցերով աշխատանքային խմբի 32-րդ նստաշրջանին մասնակցություն

6. Քննարկված թեմաները՝

2022 թ. նոյեմբերի 7-ին քննարկվել են ստանդարտացման, չափագիտության, շուկայի վերահսկողության, համապատասխանության գնահատման, ազգային տեխնիկական կանոնակարգերին և կանոնակարգվող ոլորտում միջազգային համագործակցությանն առնչվող թեմաներ,

2022 թ. նոյեմբերի 8-ից 9-ը կայացել է պանելային քննարկում, որի ընթացքում քննարկվել են՝

- Թվային, կանաչ փոխակերպումներ և որակի ենթակառուցվածք,
- Թվային, կանաչ փոխակերպումներ այլ ոլորտներում, որոնք կարող են ազդել որակի ենթակառուցվածքի վրա

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Կայացած նստաշրջանի ընթացքում ներկայացվել են որակի ենթակառուցվածքի հիմնական սկզբունքները: Յուրաքանչյուր բանախոս անդրադարձել է որակի ենթակառուցվածքի ընդհանուր նկարագրությանը, ինչպես նաև ապագա մարտահրավերներին (կայունություն/թվայնացում): Մի շարք հարցերն են բարձրացվել թվայնացման գործընթացի ժամանակ ակնկալվող հնարավորությունների (ռիսկերի գնահատման և համապատասխանության գնահատման բարելավման մասով), ինչպես նաև մարտահրավերների վերաբերյալ: Մասնավորապես բարձրացված հարցերը հիմնականում առնչվել են նրան, որ տեխնոլոգիաների ինտեգրումը արտադրանքին կարող է նաև բարդացնել արտադրանքի համապատասխանության և անվտանգության վերլուծությունը, ինչպես նաև միջազգային ստանդարտների վրա չհիմնված տեխնոլոգիաները կարող են պոտենցիալ տեխնիկական խոչընդոտներ ստեղծել առևտրի համար:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Աշխատանքային խմբի անդամներին ներկայացվել է «Կանոնակարգվող համագործակցություն և ստանդարտացման քաղաքականություն» հարցերով աշխատանքային խմբի 32-րդ նստաշրջանի հաշվետվությունը: Համաձայն ներկայացված հաշվետվության՝

- առաջարկվել են աջակցության տարբերակներ թվային, կանաչ փոխակերպումներ հասանելի ռեսուրսների շրջանակներում և համագործակցություն համապատասխան միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների և զարգացման գործընկերների հետ,
- ընդունվել է 2023 թվականի համար «Կանոնակարգվող համագործակցություն և ստանդարտացման քաղաքականություն» հարցերով աշխատանքային խմբի աշխատանքային ծրագիրը ECE/CTCS/WP.6/2022/12 փաստաթղթում ներառելու որոշում,
- ընդունվել են ECE/CTCS/WP.6/2022/11 փաստաթղթում ներառված՝ «Կանոնակարգվող համագործակցություն և ստանդարտացման քաղաքականություն» հարցերով

աշխատանքային խմբի վերանայված լիազորությունները, որոնք ներկայացվելու են Առևտրային կարողությունների և ստանդարտների ղեկավար կոմիտեի հաստատմանը,

• ընդունվել է ի գիտություն ECE/CTCS/WP.6/2022/10 փաստաթղթում ներառված ծրագրի հաշվետվությունը,

• հաստատվել է ECE/CTCA/WP 6/2022/8 փաստաթղթում ներառված գենդերային ասպեկտները հաշվի առնող ստանդարտների մշակման նախաձեռնության շրջանակներում իրականացվող գործունեության մասին զեկույցը՝ կոչ անելով անդամ պետություններին երկխոսության մեջ մտնել ստանդարտացման մարմինների հետ իրենց իրավասության սահմաններում, որպեսզի նրանք ստորագրեն Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողովի հռչակագիրը ստանդարտների և գենդերային ասպեկտները հաշվի առնող ստանդարտների մշակման մասին, միաժամանակ հաշվի առնելով նաև հետագա աշխատանքների ֆինանսավորման, գենդերային հարցերի գործողությունների ծրագրերի համար կարողությունների զարգացման հարցերը,

• ներկայացվել է ECE/CTCS/WP.6/2022/4 փաստաթղթում ներառված շուկայի վերահսկողության ոլորտին առնչվող տերմինների վերանայված բառարանը՝ խրախուսելով անդամ պետություններին տրամադրել արտաբյուջետային ֆինանսավորում, որպեսզի դա հասանելի լինի էլեկտրոնային եղանակով:

• **9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝**

Առաջարկվել է «Կանոնակարգվող համագործակցություն և ստանդարտացման քաղաքականություն» հարցերով աշխատանքային խմբի 33-րդ նստաշրջանը անցկացնել 2023 թվականի նոյեմբերի 23-ից 24-ն ընկած ժամանակահատվածում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

15.11.2022թ.